Կազմակերպություն՝ <<Երևանի Լեոյի անվան համար 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈԱՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՄՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա Պատմություն

Մասնակից Զիրոյան Գայանե

Ղեկավար Սաֆարյան Արմինե

Թեմա Պատմության ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործումը հետազոտական աշխատանքների ընթացքում

Երևան 2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն.....2

2. Հետազոտական մեթոդները և դրանց իրականացման փուլերը 3

3. Ուսուցչի կողմից սեփական մասնագիտական գործունեության հետազոտությունը որպես ինքնազարգացման խթան 7

4. Համագործակցային հետազոտություն 11

5. Եզրակացություն 15

6. Օգտագործված գրականության ցանկ 16

Ներածություն

Իսկ ի՞նչ է հետազոտությունը: Պարզ սահմանումներում «հետազոտությունը» ներկայացվում է որպես համակարգված գործողությունների ամբողջություն, շարք, հաջորդականություն, որի նպատակն է փաստերի բացահայտումն ու մեկնաբանությունը, վարկածների հաստատումը/հերքումը, տեսական և գործնական հայացքների վերանայումը: Հետազոտություն կատարելիս պատմության ուսուցչի աշխատանքն է լինում որոնել, գտնել, մշակել ու իր սովորողներին առաջարկել այնպիսի ուսումնական գործունեություն, որն առավել արդյունավետ կաշխատի պատմության դասաժամին: Այլ խոսքերով, մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտությունը ինքնավերլուծության, կշռադատման և տեղեկությունների հավաքագրման և արժևորման գործընթաց է:

Աշխատանքը վերաբերում է ուսուցչի կողմից իր հետազոտական գործառույթի իրականացմանը և սեփական մասնագիտական գործունեության հետազոտմանը: Որպես տեխնոլոգիա ներկայացված է հետազոտության այս ձևին բնորոշ քայլերի հաջորդականությունը և փուլային իրականացումը Աշխատանքում հիմնավորվում են նման հետազոտություններ իրականացնելու անհրաժեշտությունն ու հնարավորությունները գործող ուսուցիչների կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցիչն իր մասնագիտական պարտականությունները կատարելիս մշտապես գտնվում է կենդանի, զարգացող բնական գործընթացում և ստեղծագործական միջավայրում Ուսուցչի կողմից իրականացված յուրաքանչյուր հետազոտական աշխատանք կհարստացնի ոչ միայն կրթության, այլև մանկավարժության զինանոցը: Սեփական մասնագիտական գործունեությունը հետազոտելու և գնահատելու տեխնոլոգիայի կիրառումն արժևորվում է այն շեշտադրումներով, որ դրա միջոցով ապահովվում է ուսուցչի մասնագիտական աճը, ինքնագնահատումն ու ինքնավերլուծությունը, իրականացվում է լավագույն փորձի փոխանակման գործընթաց, ստեղծվում է ուսուցման գործնական տվյալների հսկայածավալ բազա

Հետազոտական մեթոդները և դրանց իրականացման փուլերը

Հետազոտական գործունեությունը ժամանակակից ուսուցչի մանկավարժական գործունեության անբաժանելի մասն է՝ ապահովելով նրա բոլոր մյուս տեսակների կազմակերպումը։ Հետազոտական աշխատանքը, որպես մանկավարժական գործունեության կառուցվածքի բաղադրիչ, ազդում է ուսուցչի մասնագիտական իրավասության զարգացման, ուսուցչի անհատականության ձևավորման և զարգացման վրա՝ որպես ակտիվ սուբյեկտի: Այն ուսուցչից պահանջում է գիտական մոտեցում ցուցաբերել մասնագիտական առարկայի նկատմամբ, քանի որ հետազոտական բնույթի ցանկացած աշխատանք կատարելիս ուսուցիչն այս կամ այն չափով առնչվում է գիտությանը:

Մանկավարժական գործունեությունն ունի հստակ նպատակներ, շարժառիթներ, դրդապատճառներ, գործողություններ, գործառույթներ, գործունեություն իրականացնելու պայմաններ, եղանակներ, միջոցներ, օբյեկտիվ և սուբյեկտիվ ազդեցության գործոններ: Որակյալ կրթության ապահովումը հասարակության առաջնահերթ պահանջներից է: Այսօր ժամանակակից դպրոցին հասարակությունը առաջադրում է նոր պահանջներ, որոնց իրագործման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ: Ուսուցչի աշխատանքը ստեղծագործական է և այդ պատճառով չունի հստակ ամրագրված նորմատիվներ, քանի որ հաճախ պայմանավորված է լինում՝ իրադրությունից բխող գործողություններով, նոր հակազդեցությունների առաջացման հնարավորություններով, ստեղծագործական մտահղացումներով, երեխայի հոգեֆիզիկական մեխանիզմներին առաջադրվող պահանջներով, գործողությունների բարդությամբ և բազմազանությամբ: Մանկավարժական գործունեությունը կարելի է դիտարկել որպես մանկավարժորեն նպատակահարմար գործողությունների հաջորդականություն:

Ցանկացած հետազոտություն՝ մտահղացումից մինչև աշխատանքի վերջնական ձևավորումը, իրականացվում է միանգամայն յուրահատուկ մոտեցմամբ: Այն հետազոտական գործունեությունը, որն իրականացնում է ուսուցիչը իր մասնագիտական որակները զարգացնելու նպատակով, ինքնուրույն

մշակված ռազմավարություն է: Հետազոտական աշխատանքի կատարման հաջողությունը մեծապես կախված է հետազոտության արդյունավետ մեթոդների ընտրությունից: Հետազոտության մեթոդների միջոցով են հասնում առաջադրված նպատակների իրականացմանը: Մեթոդներն այն անհրաժեշտ գործիքներն են, որոնք ծառայում են փաստական նյութի ձեռքբերմանը:[1] Հետազոտական աշխատանք իրականացնելիս նպատակահարմար է կիրառել վերլուծություն (հետազոտության մեթոդ, որի գործադրմամբ թեման տարրաբաժանվում է բաղկացուցիչ մասերի) և համադրություն (վերլուծությամբ առանձնացված մասերի միացում) մեթոդները, իսկ զարգացող բարդ օբյեկտների հետազոտությունների համար կիրառվում է պատմական մեթոդը: Այն կիրառվում է միայն այն դեպքում, երբ այս կամ այն կերպ հետազոտության առարկա է դառնում օբյեկտի պատմությունը: Մանկավարժական հետազոտության մեթոդներից են նաև էմպիրիկ մեթոդները՝ մանկավարժության գիտամեթոդական գրականության, արխիվային նյութի ուսումնասիրման մեթոդը, պատմահամեմատական մեթոդները (ծագումնաբանական, պատմահամեմատական, պատմական):

Հետազոտությունների որոշ տեսակներ կարելի է խմբավորել ըստ որոշակի հատկանիշների. ավանդական հետազոտություն, որը վաղուց ի վեր կիրառվող, մշակված և կիրառման պատմական ճանապարհ անցած ձև է, և ոչ ավանդական՝ նորովի մոտեցում. յուրաքանչյուր մասնագետի կողմից սեփական գործունեությունը նորացնելու, զարգացնելու համար կատարվող նորամուծությունների ինքնուրույն մասնագիտական գործունեության հետազոտություն: Հետազոտությունների այս տիպերը համեմատելու խնդիրը ոչ թե դրանք իրար հակադրելն է կամ հետազոտությունների առումով որևէ նոր, կտրուկ շրջադարձ գրանցելը, այլ այնպիսի մի մոտեցում ներկայացնելը, որը կարող է կիրառել ցանկացած մանկավարժ, գործող ուսուցիչ:

Հետազոտության մեկ այլ տարատեսակ է Դեպքի ուսումնասիրությունը: Այս մոդելը ևս ճկուն է, քանի որ լայն տարածում ունի նաև որպես ուսուցման մեթոդ և այդ առումով ավելի ընդունելի է դարձել մանկավարժների լայն շրջանակի կողմից:

[1] Մեթոդական ցուցումներ ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2014

Այս դեպքում հետազոտության առարկան մի ամբողջական դեպք, իրադարձություն կամ պատահար է, ինչը կարող է իր մեջ կրթական համալիր խնդիրներ պարունակել: Օրինակ՝ կարող են ընդգծվել որոշակի տեղեկատվություն դպրոցի, դասարանի, դասավանդման ոճի, ուսուցման սուբյեկտների փոխհարաբերությունների վերաբերյալ, հիմնախնդիր կամ հանգամանք, արգելք կամ խոչընդոտ: Այս ամենը կարող է վերաբերել ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ որոշակի խմբի, երեխայի, անգամ ծնողի կամ դպրոցի որևէ այլ աշխատակցի: Օրինակ՝ պատմության դասաժամին ուսուցիչը փորձում է դասավանդման այլընտրանքային մեթոդներ կիրառել՝ աշակերտներին առաջարկելով նոր աշխատառճ, որի նպատակը նրանց ստեղծագործական մտածողությունը զարգացնելն է: Այս մոդելն ուսուցչին հնարավորություն է տալիս անձնավորել կոնկրետ հանգամանքները՝ կոնկրետ դեպքն ավելի հասկանալի դարձնելու նպատակով: Սկսել հետազոտությունը՝ ենթադրում է խնդրի լուծման նպատակով քայլեր ձեռնարկել կամ նոր գաղափարների և մոտեցումների քննարկում սկսել: Քննարկումները կամ խնդիրների վերլուծության ընթացքը կարող է լինել «բաց» կամ «փակ»: «Փակ» է այն դեպքում, երբ խնդիրներն ամբողջապես համարվում են լուծված, իսկ եթե «բաց» է, ապա խնդրի լուծման ուղիները բազմազան են, և հետազոտության ընթացքն էլ շարունակելի է: Սա նշանակում է, որ պետք է աշխատանքներն ավարտել՝ նկարագրելով առկա իրավիճակը, գուցե նաև ներկայացնել հետագա քայլերի հաջորդականությունը: Շատ կարևոր է հետազոտության արդյունքների պարբերաբար ներկայացումը խնդրով հետաքրքրված, շահագրգիռ լսարանին: Աշխատանքի, գործունեության, խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները կամ գաղափարների փորձարկման վերջնական տվյալներն ու եզրահանգումները մշտապես պետք է լուսաբանվեն: Այսպիսով, ուսուցչի կողմից իր հետազոտական գործառույթը իրագործելու համար լայն հնարավորություններ կան, ինչի հիմքը նրա ամենօրյա դասարանային և արտադասարանային աշխատանքն է:

Հետազոտության մշակումն ու իրականացումը փուլային գործընթաց է, քայլերի հստակ հաջորդականությամբ՝

Հետազոտությունը ուսուցչին հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ և կողմնորոշվել նոր իրավիճակներում ու խնդիրներին ավելի արդյունավետ լուծումներ տալ: Մանկավարժական հետազոտությունների դիմելը պարտադիր է բոլոր այն մասնագետների համար, ովքեր ցանկանում են շարունակաբար, հետևողականորեն բարելավել, զարգացնել մասնագիտական որակները և բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը:

- Ախտորոշման փուլ, որի ընթացքում սահմանվում են լուծումներ պահանջող խնդիրները կամ իրադրությունը:

- Նախապատրաստական փուլ, երբ առանձնացվում, մշակվում են այն գործողությունները, ռազմավարությունները, որոնք կարող են գործի դրվել և փոփոխել իրավիճակը:

- Գործունեության փուլ, որի ընթացքում կիրառվում է նորովի մշակված ռազմավարությունը և տվյալներ են հավաքագրվում:

- Գնահատման փուլ, որի ընթացքում ուսումնասիրվում և արժևորվում են արդյունքները, համակարգվում, վերլուծվում և եզրահանգումներ են արվում: Մշակված պլանի իրականացման ընթացքում կատարվում է տվյալների հավաքագրում:[2]

[2] ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՐԵՎԱՆ 2020

Ուսուցչի կողմից սեփական մասնագիտական գործունեության հետազոտությունը որպես ինքնազարգացման խթան

Մանկավարժի գործառույթները բազմազան են, սակայն դրանցից առանձնացնենք սեփական մասնագիտական գործունեության հետազոտությունը:

Մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտության նպատակը ուսուցչի կողմից սեփական աշխատանքը քննելու, վերլուծելու միջոցով բարելավելը, զարգացնելը, արդյունավետությունը բարձրացնելն է և, ի վերջո, փոփոխելը: Այն կիրառվում է կոնկրետ իրավիճակում խնդիրների բացահայտման ու լուծման նպատակով:

Գործունեության հետազոտությունը երբեմն անվանում են լսարանային հետազոտություն, որը միտված է ուսուցչին օգնել բարելավելու իր ուսումնական գործընթացը:[3] Ուսուցիչն իր մասնագիտական պարտականությունները կատարելիս մշտապես գտնվում է ստեղծագործական մթնոլորտում: Տիրապետելով փորձի, գիտելիքի, ինչպես նաև դրանք ձեռք բերելու միջոցներին, աշխատանքի հնարներին և մեթոդներին՝ ուսուցիչները տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն ձևակերպում և ամրագրում ամենօրյա աշխատանքի ընթացքում իրենց կատարած բացահայտումներն ու «հայտնագործությունները»: Մանկավարժական բոլոր գործառույթները փոխկապակցված են և մշտապես ընդլայնվում են:

Մանկավարժի կողմից իր սեփական մասնագիտական գործունեությունը հետազոտելու մոտեցումները կարող են դառնալ գործնական իրողություն՝ լինելով յուրաքանչյուրի սեփականությունը: Տեղեկատվության շարունակական հավաքագրումը և դրա համակարգումը, քննադատական վերլուծությունը կարող են արդյունավետորեն իրականացվել ոչ միայն գիտնականների կողմից: Հետազոտությունը խթանում է ուսուցչի ազատությունը: Այն գործընթաց է, որը յուրաքանչյուր ուսուցչի հնարավորություն է տալիս փնտրել, ընտրել և ամրագրել ուսուցման արդյունավետությանը նպաստող ցանկացած գործողություն: Սա

[3] Կրթություն, բարեփոխումներ, հիմնախնդիրներ, Վանաձոր 2010

ենթադրում է՝ խրախուսել ուսուցիչներին հետազոտություններ կատարելու այն դասարաններում և դպրոցներում, որտեղ դասավանդում է: Երբ ուսուցիչն ինքն է կատարում հետազոտություններ, նա այդ կերպ հնարավորություն է ստանում կատարելագործելու իր մասնագիտական գործունեությունը:

Ուսուցչի կողմից իր սեփական գործունեության ուսումնասիրությունը կրթական խնդիրների լուծման մոդել է, որը հնարավորություն է տալիս հետազոտություններ կատարել կենդանի, գործնական միջավայրում: Մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտությունը հիմնված է ուսուցչի ամենօրյա աշխատանքի և վերջինիս անձնական ու մասնագիտական նպատակների վրա: Դասարանում ուսուցչի կատարած աշխատանքների վերլուծության հիման վրա ուսուցման գործընթացը բարելավելու ձգտումը չափազանց կարևոր դեր է խաղում: Գործունեության հետազոտության արդյունքում շատ հաճախ հնարավոր է լինում պատասխանել կոնկրետ ուսուցմանը վերաբերող որոշակի առանձնահատուկ հարցի: Արդյունքում մեկ ուսուցչի մասնավոր փորձն ու հաջողությունները կարող են ուսանելի լինել նաև մյուս ուսուցիչների համար: Մենք գործ ունենք ուսուցչի աշխատանքն ուսումնասիրելու այնպիսի միջոցի հետ, որը թույլ է տալիս պարզել մասնագիտական խնդիրը լուծելու հաջողության հնարավորությունը և ավելի լավ հասկանալու հետևյալը.

•հետազոտություններ անցկացնելու մեթոդների արդյունավետությունը՝ տվյալ խնդրի առնչությամբ,

• կրթական ծրագրերի արժեքը,

•տեսության և դասարանում գործնական աշխատանքների միջև կապի ապահովումը,

•աշակերտների հաջողությունների գրանցման մեթոդները,

•ուսուցման տարբեր խնդիրներ լուծելու մեթոդական ձևերը:

Դիտարկենք ուսուցման գործընթացում սեփական աշխատանքն ուսումնասիրելու պարզագույն մի ընթացք.

1. տվյալների հավաքագրում, համակարգում և վերլուծություն

2. խնդրի և վարկածի սահմանում

3. կոնկրետ գործընթացի նկարագրություն

4. եզրակացություններ

5. արդյունքների ամբողջացում, ներկայացում:

Տվյալների հավաքագրումը մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտության ամեն մի բաղադրիչին բնորոշ հատկանիշ է: Պատմության ուսուցչուհին տվյալների հավաքագրման համար կարող է օգտագործել տարբեր մեթոդներ ու տեխնոլոգիաներ՝

• հարցումներ - հարցաթերթեր, անձնական կարծիքներ, դատողություններ և համոզմունքներ, դիտողություններ և առաջարկներ,

• թղթապանակ կազմել և վարել - ուսումնական պլաններ, դասարանական գործունեության, իրադարձությունների նկարագրություններ, կրթական խնդրի շուրջ անձնական գաղտնիք չպարունակող տեղեկատվություն և այլն,

• ուսումնական նյութեր – ռեսուրսներ, ուսումնաօժանդակ գրականություն, ծրագրեր, նախագծեր,

•փաստաթղթերի հավաքածու – օրենքներ, կանոնակարգեր, կարգադրություններ, հետազոտության բովանդակությանը համապատասխան այլ փաստաթղթեր,

•ձայնագրություն - տեսագրություններ, ձայնագրություններ, լուսանկարներ, նկարներ, սլայդներ և այլն,

•հարցազրույցներ, քննարկումներ – պլանավորված ոչ պլանային, դեմ առ դեմ, բանավոր, հեռավար փոխներգործության արդյունքներ: Կարևոր է նշել այն, որ

մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտության տարբեր փուլերի ընթացքում մանկավարժ-հետազոտողը, բացի իր հիմնական մասնագիտական դերերից՝ տվյալ դեպքում որպես հետազոտություն իրականացնողից, ստանձնում է նաև պլանավորող-նախագծողի, առաջնորդի, մասնակցի, ունկնդրող-դիտորդի, լրագրողի և այլ դերեր:

Այսպիսով երբ ուսուցիչը որևէ աշխատանք է պլանավորում, մշակում կամ փորձում գործնականում այն կիրառել, նա, մտածելով անցյալում իրականացրած գործողությունների մասին, թե ինչ արդյունք է տվել կամ արդյունքում ինչ հետևանքներ են եղել, փորձում է կատարելագործել իր հետագա քայլերը:

Այսպիսով, սեփական մասնագիտական գործընթացի կիրառումը և վերլուծությունը էական դեր է խաղում դասավանդող ուսուցչի աշխատանքում: Հաճախ ուսուցիչները մասնագիտական բնազդով զգում են, թե ինչը դասարանում կգործի, իսկ ինչը՝ ոչ: Պատմության ուսուցչի համար հետազոտական գործունեություն իրականացնելը մի գործընթաց է, որը հանդիսանում է խթան ինքնակատարելագործման ու մասնագիտական զարգացման համար:

Ինչպես ցանկացած մասնագիտական գործունեություն, ուսուցչի աշխատանքը ևս բովանդակային, կառուցվածքային և գործառութային մշտական վերլուծության կարիք ունի: Սեփական մասնագիտական գործընթացի վերլուծությունը էական դեր է խաղում դասավանդող ուսուցչի աշխատանքում: Հաճախ ուսուցիչները մասնագիտական բնազդով զգում են, թե ինչը դասարանում կգործի, իսկ ինչը՝ ոչ: Նրանք մշտապես ձգտում են լուծել դասարանում ծագող խնդիրները և շարունակական աշխատանք են տանում («բաց դեպք»): Ուսուցչի հետազոտական գործառույթը իրագործվում է փաստարկված, մասնագիտորեն հիմնավորված վերջնարդյունքներ ներկայացնելու դեպքում՝ սահմանում, պլանավորում, իրականացում (կիրառում), վերլուծություն, համադրում և ամփոփում:

Ինչպես ցանկացած մասնագիտական գործունեություն, ուսուցչի աշխատանքը ևս բովանդակային, կառուցվածքային և գործառութային մշտական

վերլուծության կարիք ունի: Սեփական մասնագիտական գործընթացի վերլուծությունը էական դեր է խաղում դասավանդող ուսուցչի աշխատանքում: Հաճախ ուսուցիչները մասնագիտական բնազդով զգում են, թե ինչը դասարանում կգործի, իսկ ինչը՝ ոչ: Նրանք մշտապես ձգտում են լուծել դասարանում ծագող խնդիրները և շարունակական աշխատանք են տանում («բաց դեպք»): Ուսուցչի հետազոտական գործառույթը իրագործվում է փաստարկված, մասնագիտորեն հիմնավորված վերջնարդյունքներ ներկայացնելու դեպքում՝ սահմանում, պլանավորում, իրականացում (կիրառում), վերլուծություն, համադրում և ամփոփում:

Համագործակցային հետազոտություն

Հետազոտությունները կարող են ունենալ համագործակցային բնույթ, քանի որ այս դեպքում ենթադրվում է խմբային աշխատանք և իրականացվում է ուսուցիչների համագործակցային թիմի կողմից: Հետազոտությունը համագործակցային թիմով կարելի է իրականացնել ուսումնական հաստատությունում: Համագործակցային հետազոտությունը գործընթաց է, որին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝

- այն ենթադրում է ուսուցիչների խմբի (նաև այլ շահագրգիռ մարդկանց) մասնակցություն
- այն անաչառ է (հավասարապես գնահատվում է բոլորի կողմից)
- այն լիբերալ է (ազատություն է ապահովում մասնակից սուբյեկտների համար, ձերբազատում է կաշկանդող պայմաններից):

Համագործակցային մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտությունը ձևավորում է դրական աշխատանքային փոխհարաբերություններ դպրոցի ղեկավարության, ուսուցիչների, ծնողների և սովորողների միջև: Նման հետազոտությունը սեփական գործունեությանը անդրադարձ կատարելու կարողությունների, հետազոտման մեթոդների իմացության և արձագանքող ու նպատակասլաց մասնագիտական գործունեության քայլերի ընկալման հետ մեկտեղ պահանջում է խմբային դինամիկ աշխատանքի կարողություններ Ուսուցիչները կարող են զբաղվել համագործակցային մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտությամբ՝ կրթական հարցերի մասին խորհելու և տեղեկանալու համար: Այս պարագայում ուսուցիչներն աշխատում են միասին, միավորում են գաղափարներն ու ջանքերը՝ ցանկալի նպատակների հասնելու համար, որոնք կարևոր են հատկապես աշակերտների առաջադիմության համար: Մասնագետները միավորվում և համագործակցում են կարևոր միասնական նպատակի շուրջ: Միավորման կարելի է հասնել այն դեպքում, երբ մարդկանց փոխհարաբերությունները հիմնված են

փոխադարձ հարգանքի, փոխօգնության և փոխըմբռնման վրա, արժևորելով այլ մարդկանց գաղափարների ու զգացմունքների կարևորությունը համատեղ աշխատանքի ընթացքում: Հետազոտության խմբերում կարող են ընդգրկվել ուսուցիչներ, դպրոցի ղեկավար կազմի ներկայացուցիչներ, սովորողներ, ծնողներ և այլ շահագրգիռ անձիք: Հետևաբար մասնակիցների միջև կլինեն տարբերություններ, որոնք անխուսափելի են մասնագիտական պատրաստության, շարժառիթների, անձնային առանձնահատկությունների տեսանկյունից, ինչի արդյունքում, մասնակիցներից ոմանք ավելի պասիվ են լինում: Ուստի մասնագիտական գործունեության հետազոտությունը պլանավորելիս և իրագործելիս անհարաժեշտ է խմբի անդամներից յուրաքանչյուրի համար ապահովել հավասար իրավունքներ, հաշվի առնել յուրաքանչյուրի գաղափարներն ու կարողությունները: Նման հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ և կարևոր են ամենաբազմազան պարբերաբար և հաճախակի կազմակերպվող հանդիպումները, որոնք ենթադրում են՝

- մանրամասն բացատրել այն առաջադրանքները, որոնց վրա աշխատելու են խմբի անդամները հանդիպման ժամանակ և դրանից հետո,
- մտքեր փոխանակել աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկատվության, կոնկրետ խնդրի և առաջադրանքի վերաբերյալ,
- կազմակերպական հայտարարություններ անել խմբի աշխատանքի վերաբերյալ,
- ընթացիկ հայտարարություններ անել՝ օգնելով խմբի անդամներին՝ կշռադատելու և իմաստավորելու քննարկման ընթացքը,
- հարցումներ անցկացնել՝ պարզելու համար յուրաքանչյուր անդամի կարծիքն ու վերաբերմունքը քննարկման կոնկրետ հարցի վերաբերյալ,
- կիրառել բանավեճեր ու մտագրոհներ և այլ փոխներգործուն մեթոդներ քաջալերել նախաձեռնողականությունը:

Հաջողության հասնելու բացառիկ կարևոր հանգամանք է խմբային աշխատանքը մանրամասն վերլուծելը: Հանդիպումներից յուրաքանչյուրի ավարտին կամ նաև ընթացքում խմբի անդամները քննարկում, վերլուծում են խմբի աշխատանքն ու մասնակիցների համագործակցությունն ու փոխներգործությունը՝ բացառապես հետագա աշխատանքը բարելավելու նպատակով: Եթե խումբը, համաձայնության գալով, որևէ որոշում է կայացրել, ապա անպայման պետք է կատարի այդ որոշումը, հակառակ դեպքում այն հաջորդ հանդիպման համար քննարկման առարկա պետք է դառնա: Այսպիսով, համագործակցային մասնագիտական գործունեության հետազոտություն իրականացնելու համար խմբի բոլոր անդամները պետք է մշտապես լինեն հաղորդակցության մեջ, հասկանան հետազոտության գլխավոր և ստեղծագործաբար մոտենան կոնֆլիկտներին, ընդունեն և գնահատեն խմբի անդամների միջև եղած տարբերություններն ու առանձնահատկությունները: Հետազոտությունը օգնում է մանկավարժական գործընթացի մասնակիցներին մտածել և տեղեկություններ հավաքել իրենց պրակտիկ գործունեության վերաբերյալ և այլընտրանքային ճանապարհներ փնտրել՝ բարելավելու համար իրենց իսկ աշխատանքը: Հետազոտող ուսուցիչները հետևում են նրան, թե ինչ են անում իրենք, կամ պետք է անեն, ինչ են մտածում և զգում՝ փնտրելով զանազան ստեղծագործական միջոցներ՝ իրենց գործունեությունը բարելավելու համար: Գործունեության հետազոտությունը ենթադրում է ուսուցման գործընթացի նորացում, փոփոխություն: Թե՛ համագործակցային թիմը, թե՛ անհատապես աշխատող ուսուցիչները պետք է մտածեն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի դպրոցը, որն ի զորու է սպասարկելու աշակերտներից յուրաքանչյուրին և ամեն մեկին՝ ըստ նրանց առանձնահատկությունների և անհատականության: Ընդունելով սեփական մասնագիտական գործունեության հետազոտության գաղափարը՝ հնարավոր կլինի ևս մեկ գործիքի տիրապետել, որը կօժանդակի դպրոցի շարունակական բարելավմանը: Սա միջոց է՝ ուսումնասիրելու դպրոցում տիրող իրական վիճակը, պրակտիկ գործունեության որակը և արդյունքները բարելավելու ուղիները: Այդ կերպ ուսուցիչը մասնագիտական աճ ունենալու, կատարելագործվելու հնարավորություն է ստանում, երբ սեփական մասնագիտական գործունեությունը հետազոտելով գնահատում և արժևորում է

ուսուցման կոնկրետ գործընթացը, պատկերացնում է, թե ինչպես հնարավոր կլինի հասնել ցանկալի կրթական նպատակների: Իրականում սա պարբերական և շարունակական գործընթաց է, որն ուսուցիչներին հնարավորություն է տալիս ստուգելու իրենց տեսական գիտելիքները գործնականում, ինչպես նաև համոզվելու, որ իրենց աշխատանքը շարունակական բարելավման կարիք ունի:[4]

[4] ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՐԵՎԱՆ 2020

Եզրակացություն

Ամփոփելով պետք է նշել, որ մանկավարժական մասնագիտական հետազոտությունների դիմելը պարտադիր է բոլոր այն մասնագետների համար, ովքեր ցանկանում են բարելավել, զարգացնել իրենց մասնագիտական որակները և բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը: Հետազոտության արդյունքները ցանկալի է ներկայացնել գործընկերներ ուսուցիչներին, ինչը աշխատանքին կտա լայն մասնագիտական և հասարակական ուղղվածություն՝ շատերին հնարավորություն ընձեռելով օգտվել արդեն իսկ ձեռք բերված փորձից ու գիտելիքներից: Այս նպատակով արդյունավետ է կազմակերպել սեմինար-քննարկումներ, կլոր սեղաններ, զեկույցներ, ներկայացումներ, դասընթացի բաց դիտումներ և այլն: Երբ ուսուցիչներն ակտիվորեն զբաղվում են մանկավարժական մասնագիտական գործունեության հետազոտությամբ, ապա ավելի ու ավելի հնարավոր է դառնում դպրոցը ժամանակի ոգուն համապատասխանեցնելը: Դպրոցները բարեփոխումների ընթացիկ շարժման մեջ չեն ընդգրկվի այնքան ժամանակ, քանի դեռ կրթության բոլոր սուբյեկտները չեն համագործակցում ուսուցման գործընթացի զարգացման հարցում, որտեղ սովորել՝ սովորելու համար գաղափարը, ստեղծագործ լինելու ձգտումը և համագործակցելով աշխատելը իրական գործընթացի չեն վերածվում:

Այսպիսով, հետազոտական գործունեությունը ժամանակակից ուսուցչի մանկավարժական գործունեության անբաժանելի մասն է, որն ապահովում է նրա բոլոր այլ տեսակների կազմակերպումը՝ ազդելով ուսուցչի մասնագիտական կարողությունների զարգացման վրա և կատարելով այս զարգացման միջոցի գործառույթը. գործողություններ, որոնք ուղղված են ուսուցչի անձի ձևավորմանն ու հետազոտական հմտությունների և կարողությունների զարգացմանը: Նման հետազոտությունների իրականացման պարբերականությունը կարող է օժանդակել բարեփոխումների համատեքստում ուսուցման գործընթաց ներդրվող նորարարությունների գնահատմանն ու արժևորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կրթություն, բարեփոխումներ, հիմնախնդիրներ, Վանաձոր 2010

2. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՐԵՎԱՆ 2020